МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«14» 10 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «Սարքերի, սարքավորումների, գործիքների և նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) 7-րդ չափաբաժնի համար ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օր (23 դեկտեմբերի 2023 թվական), սակայն մինչ օրս 7-րդ չափաբաժնի մասով ապրանքները Մասնակցի կողմից չեն մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը)՝ տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը 2024 թվականի հոկտեմբերի 04-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշեցի՝

1. «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և Մասնակցին տրամադրելու օրվանից:

3. Որոշումը կայացվելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ-ին:

Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	Գործու նեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման, ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳՍԻ» Ա/Ձ	47980417	Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր թաղամաս, 12 շենք, բն. 25		V		Որոշման ամսաթիվը՝ 14.10.2024թ., Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/26»

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
գլխավոր մասնագետ, պետի պարտականությունները կատարող
Մելինե Սողոյան հեռ. 060 38-00-40, 077 19-80-99